ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/66, 14.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Նորք Մարաշ ԲԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46

Գնման առարկան՝ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն

օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) Պատվիրատուի անվանումը՝ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արմենակյան 108/4

3) Գնանշման հարցման ծածկագիրը՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46»
և առարկան՝ <<Բժշկական նշանակության ապրանքների ձեռք բերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ն << Բժշկական նշանակության ապրանքների >> ձեռքբերման նպատակով 2022թ. ապրիլի 12-ի թիվ 1 որոշմամբ Հայտարարություն է հրապարակել «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման Հրավերի մասին(կից փաստաթուղթ թիվ 1):

Համաձայն Հրավերի 2-րդ մաս ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ –ի՝

<<**Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝** «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և **այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան** և նպատակ ունի <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:>> (կից ներկայացնում ենք Հրավերի 2-րդ մասը՝ կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները):

Համաձայն ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանի՝ սահմանվել են մրցույթների փաստաթղթերի օրինակելի ձևերը, որտեղ հաստատված է նաև պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>>-ի օրինակելի ձևը (կից փաստաթուղթ թիվ 3):

<<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման Հրավերի ապրանքի մատակարարման պայմանագրի Հավելված թիվ 1-ը (կից փաստաթուղթ թիվ 4) չի համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>>-ի օրինակելի ձևին:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2022թ. ապրիլի 12-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Բժշկական նշանակության ապրանքների>> ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

<<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/46» ծածկագրով գնանշման Հրավերի ապրանքի մատակարարման պայմանագրի Հավելված թիվ 1-ը ի համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով սահմանված պահանջներին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 4 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն Սմբատ Բալասանյան

14 ապրիլի 2022թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, հ/հ 2050922055871001